

ՀԱՄԱՌՈՏ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐԹՈՒՐ ԷԴԱՐ

(Արթուր Վահանի Հարությունյան)

Դրամատուրգ, բեմադրիչ, հասարակական գործիչ:

Ծնվել է 1959թ. սեպտեմբերի 18-ին Լենինական քաղաքում (ք. Գյումրի):

Սովորել և ավարտել է Լենինականի Ա. Ս. Պուշկինի անվ. թիվ 6 դպրոցը, Գրիգոր Մկրտչյանի ղեկավարած դերասանական ստուդիան և Ալբերտ Մկրտչյանի կինոռեժիսորական արվեստանոցը:

Ծառայել է Սովետական բանակում:

Ուսանողական տարիներին, որպես կինոբեմադրիչ, նրա նկարահանած առաջին՝ «Արգելված պտուղը» կարճամետրաժ խաղարկային ֆիլմը մի շարք նոմինացիաներում հաղթող է ճանաչվել Երևանի հանրապետական, Մոսկվայի և Վիլնյուսի համամիութենական և Բեռլինի (ԳԴՀ) սիրողական ֆիլմերի միջազգային կինոփառատոններում:

Իր ակտիվ մասնակցությունն ու ներդրումն է ունեցել Գյումրի քաղաքի մշակութային մի շարք նոր օջախների ստեղծման ու կայացման աշխատանքներին.

Առաջին իսկ օրերից իր ադմինիստրատիվ եռանդն է ներդրել Լենինականի «Հումորի տան» գործունեությանը:

Իր ստեղծագործական խմբով մասնակից է եղել հանրապետությունում առաջիններից մեկը ստեղծված մասնավոր հեռուստաընկերության՝ «Ցայգ»-ի ծրագրային հաղորդումների կայացմանը: Նկարահանել է առաջին հաղորդումները, հեռուստասկանարկները, առաջին գովազդային տեսահոլովակները:

Որպես գեղարվեստական ղեկավար նույն եռանդն է ներդրել Լենինականի առաջին մասնավոր FM ռադիոյում՝ «TM» ստուդիայում:

Վերակառուցման տարիների կոռպերատիվ շարժման ջատագովներից է: Նրա հիմնադրած ազատ ժամանցի կազմակերպման «Էլիտա» կոռպերատիվի գործունեության շնորհիվ Գյումրիում հիմք դրվեց շուրջ բիզնեսի կայացմանն ու զարգացմանը:

Զբաղվել է հասարակական ակտիվ գործունեությամբ: Նրա հիմնադրած «Գյումրու նվաճումների ֆոնդ» ՀԿ-ն այժմ է ընկել հայրենաձայն գործունեությամբ:

Գերազանցությամբ ավարտելով Ամերիկայի Հայկական Համագումարի կողմից կազմակերպված «ՀԿ կառավարման և ղեկավարման» դասընթացները և Վանաձորի «Մարդու իրավունքների» դպրոցը, ակտիվորեն աջակցել է Հայաստանում ժողովրդավարության զարգացմանը՝ «Ցայգ» հ/ը եթերում, որպես հեղինակ և վարող, իրականացնելով «Երեխայի իրավունքները» հաղորդաշարը: Թղթակցել է «Վասն արդարության» իրավական հանդեսին: Հեղինակ է մարդու իրավունքների գաղափարի տեսական նոր մոտեցումների մի քանի հոդվածների:

Մի շարք հասարակական նախաձեռնությունների ու ծրագրերի հեղինակ է, որոնցից՝ «Գյումրու տարվա մարդ» տիտղոսը շնորհելու մրցանակաբաշխությունն իրականացվում է 2001 թվականից:

Երաժշտական տարբեր ժանրերի և տարիքային խմբերի հարյուրից ավելի երգերի տեքստերի հեղինակ է:

Շուրջ 40 ստեղծագործությունների՝ պիեսների, կինոսցենարների, բեմականացումների և թարգմանության հեղինակ է:

Հայ ժամանակակից դրամատուրգիայի մեջ «Դպրոցական դրամայի»
(Թատերագրային երկի ժանր, որն ունի կրոնաբարոյական, վարքագրական և
պատմական ուղղվածություն) թերևս միակ ներկայացուցիչն է իր տասից ավելի
աստվածաշնչյան թեմայի դրամաներով:
Հեղինակն է Գրիգոր Նարեկացու մասին պատմող «Հովիվը» գեղարվեստական
լիամետրաժ կինոֆիլմի սցենարի:
Հայաստանի թատերական գործիչների միության անդամ է:

Մամուլում տպագրված պիեսների ցանկը.

«ԲԱՐՁՐԱՀՈԳԻՆ» - «Դրամատուրգիա» # 8-9, 2005
«ՀՈԳԵՎԱՐՔ» - «Դրամատուրգիա» # 8-9, 2005
«ՀՈԳԵՊԱՀՈՒՍՏ» - «Դրամատուրգիա» # 8-9, 2005
«ՍՈՒԻՑԻԴ» («ՀՈԳԵՍՊԱՆԸ») - «ԳԱՐՈՒՆ» # 5-6, 2006 «Դրամատուրգիա» #16-17, 2009
«ԳԻՇԱՏԻՉՆԵՐԻ ԽՆՋՈՒՅՔԸ» - «Դրամատուրգիա» # 10-11, 2006
(Բեմականացում ըստ Վ. Քաչայի)
«ՀՈԳԵՎԻՃԱԿ» - «Դրամատուրգիա» # 12-13, 2007
«ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» - «Դրամատուրգիա» 12-13, 2007
«ԿԱՐՄԻՐ ՄՈԳՈՒԹՅՈՒՆ» - «Արտասահմանյան գրականություն» # 1, 2007
(Հելդերոդե: Թարգմանություն)
«NOSTRA CULPA» («ՄԵՐ ՄԵՂՔԸ») - «Դրամատուրգիա» # 20-21, 2010
«ՀՈԳԵԴԱՐՁ» - «Դրամատուրգիա» # 24-25, 2011

Բեմադրված պիեսների ոչ լրիվ ցանկը.

«ՄԵՐ ՄԵՂՔԸ» - Հալեպ; Համագրային Թատերական Միավորի թատերախումբ:
Վանաձոր; Հ. Աբելյանի անվ. պետական դրամատիկական թատրոն:
Երևան; Անտրեպրիզային ներկայացում «Արարատ 73» անվանումով:
«ԳԻՇԱՏԻՉՆԵՐԻ ԽՆՋՈՒՅՔԸ» - Վանաձոր; Հ. Աբելյանի անվ. պետ. դրամ. թատրոն:
(Բեմականացում)
«ԱՆԱՀԻՏ» - Շուշի; Մ. Խանդամիրյանի անվ. պետական թատրոն:
(Բեմականացում)
«ՀՈԳԵՎԻՃԱԿ» - Երևան; «Իրական» թատրոն:
Գյումրի; ԵԹԿՊԻ Գյումրու մասնաճյուղ:
«ՀՈԳԵՎԱՐՔ» - Վանաձոր; ԵԹԿՊԻ Վանաձորի մասնաճյուղ:
«ՍՈՒԻՑԻԴ» - Երևան; Ազգային կինոկենտրոնի «Հայֆիլմ» ստուդիայի ռեժիսորական
ֆակուլտետ:
«ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» - Երևան; «Իրական» թատրոն:
Երևան; «1 մ/2» թատերական փառատոն:
«ԶԱՔԵՈՍ» - Հայ Կաթողիկե եկեղեցու Շիրակի թեմ:
«ԵՐԵՔ ՄՈԳԵՐ» - Հայ Կաթողիկե եկեղեցու Շիրակի թեմ:
«ՓՆՏՐԵԼ ԽԱՉԸ» - Հայ Կաթողիկե եկեղեցու Շիրակի թեմ:
«ՏԱՍ ԿՈՒՅՍԵՐ» - Հայ Կաթողիկե եկեղեցու Շիրակի թեմ:
«ԱՐԹՆՈՒԹՅՈՒՆ» - Հայ Կաթողիկե եկեղեցու Շիրակի թեմ:
«ԱՆԱՌԱԿ ՈՐԴԻՆ» - Հայ Կաթողիկե եկեղեցու Շիրակի թեմ:
«ՍԱՄՈՒԵԼ» - Հայ Կաթողիկե եկեղեցու Շիրակի թեմ:
«ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆ» - «Մարիամ» ռադիոկայան: Հայ Կաթողիկե եկեղեցու Շիրակի
թեմ: